Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 26 –ի N 740 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից պետական կարիքների համար ապրանքների կողմնորոշիչ գների սահմանման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից տեղեկությունների հավաքագրումը:

2. Կազմակերպությունն ապրանքների կողմնորոշիչ գներն ու սակագները սահմանում է իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից կամավոր հիմունքներով տրամադրված, ինչպես նաև պետական մարմիններից ստացված տեղեկությունների ու սպառողական շուկայի ուսումնասիրության հիման վրա:

3. Տեղեկությունները հավաքագրվում են սույն կարգի 2-րդ կետում նշված սուբյեկտներից՝ ընտրանքային կարգով՝ ելնելով գործունեության առանձին տեսակներից:

4. Տեղեկություններ ստանալու համար գրավոր հարցում է ուղարկվում տեղեկություններ տրամադրող սուբյեկտներին:

5. Կազմակերպության կողմից ընդունվում են տեղեկություն տրամադրող սուբյեկտի ղեկավարի կամ վերջինիս լիազորած անձի կողմից ստորագրված գնացուցակները:

6. Այն դեպքում, երբ գնացուցակները կազմվում են սպառողական շուկան ուսումնասիրելու արդյունքում, դրանք ստորագրվում են սպառողական շուկան ուսումնասիրող, կազմակերպության կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից, ինչպես նաև հաստատվում կազմակերպության տնօրենի կողմից:

7. Կազմակերպությունը գնացուցակներն ընդունում է առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով, ֆաքսով:

8. Սույն կարգով չնախատեսված եղանակով ստացված փաստաթղթերը կազմակերպության կողմից վերլուծությունների կատարման հիմք չեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ